ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ· ՆԻՒ ԵՈՐՔ, ՕԳՈՍՏՈՍ 15, 1895· ԹԻՒ 14 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 101

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York N. Y. Vol. V, 1895.

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" *ևն*

ԳԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներկայ կարեւոր գործն. Հայաստանի սովելոց օգնել.— Պուլկարիա և Հայաստան. ճիզուիթք, ՀԱՅՐԵՆԻՔ և ՄՇԱԿ.— Հայոց Հայրենասիրական Դաշնակցութիւն·— Հանդէս առաջին տարեդարձի Սասնոյ նահատակութեան.— Նամակ Կ.Պոլսէ.—Նամակ Կ.Պոլսէ.— Նամակ Կ.Պոլսէ.— Կլատսթոն նորէն կը խօսի զՀայաստանէ.— Դաշոյն և ազգի դաւաճանք.— Նամակ ԴԺՈԽՔէ։

"Դժոխքի,, նոր նամակն, որոյ մէկ մասն կը գտնուի հեռուն, կարեւոր է այնու ևս զի կը ցուցնէ թէ հնչակի մեծախօս խմբագրողքն, որ այնքան զումարներ ստացան ազգի հայրենասէրներէն, Սասունն զօրացուցելու համար գործածած չեն այդ դրամներն։ Ըստ վկայութեան Դժոխքի, 8 կամ 10 հրացան միայն տըուած է հնչակ 10,000 նահատակաց ձեռքն։ Սոսիալիսդական զրախօսութիւններ հրատարակելու ծախքերէն այդքան միայն կրցան ուրեմն աւելցուցել . . . ։ Եւ դժուար հանելուկ է թէ ինչո՞ւ հնչակի և Դրօշակի խմբագրող խըմբակք, որոց երկուքն ալ յեղափոխական և սոսիալիսդ միանգամայն են, չեն զար ի մտութիւն։ Դժոխքի հետ և մեք կը հարցնեմք— "Ի՞նչ է ձեր հասկացողութիւնների մէջ եղած տարբերութիւնը"։

***

Թէ Հայոց Հայրենասիրական Դաշնակցութիւնն, իբրեւ որոշ սկզբանց համեմատ ընթացող կազմակերպութիւն, որքան ընդարձակօրէն պիտի ճիւղաւորի և ինչ կարեւոր դեր պիտի կրնայ կատարել, այն պիտի ցուցնէ ժամանակն։ Նորանուն ընկերութիւն մի երևան հանելու հաճոյքին համար չէ որ կազմուած է այն, այլ իրական և անհրաժեշտ պէտքի մի պատասխանելու լուրջ նպատակով։ Եթէ կան երիտասարդաց բաւական ստուար թիւ մի որ, Դաշնակցութեանս սկզբունքներն ճշմարտապէս ազգային գտնելով, համակրին և միանան անոր, անշուշտ կը գոյանայ քան զամենայն հզօրագոյն և ողջամիտ կազմակերպութիւնն Հայաստանի ազատութեան համար։

ՆԵՐԿԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ ՕԳՆԵԼ

Ամերիկայի Հայերն բաւական աշխատեցան միթինկներ կազմել, և Ամերիկացւոց խօսիլ տալ Սասնոյ կոտորածին և Հայաստանի աղէտներուն վրայ։ Այժմ որ հանրային կարծիքն շինուած պատրաստուած է ի նպաստ Հայոց, ալ պատեհ ատենն է գործնական օգուտ մի հանել այդ համակրութենէ։ Պէտք է Սասնոյ և շրջակայ գաւառաց հայ ժողովուրդն սովի ճանկերէն ազատելու մարդասիրական գործին ոյժ տալ որում կրնան մասնակցիլ այն ամենայն օտարականք իսկ որք քաղաքական խնդրոց չեն ուզեր խառնուիլ։

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ

Նիւ Եորքէն հայ պատգամաւորութիւն մի ներկայացաւ եպիսկոպոս Փաթըրի, և նորա խրատն ու աջակցութիւնն խնդրեց Յանձնախումբ մի կազմելու համար Ամերիկացիներէ, յօգուտ Սասնոյ և Մշոյ թշուառ սովելոց հանգանակութեան ձեռնարկելու պաշտօնով։ Մեծանուն եպիսկոպոսն շատ սիրալիր ընդունելութիւն մ'արաւ պատգամաւորութեան անդամոց, (Հայր Տէրունեանի, Տր. Այվազեանի և Մ. Ս. Գաբրիէլեանի), և յանձնարարեց գնոսա երեւելի փաստաբան Էվէրէթ Հուիլըրի, որոյ ջանիւք և ատենապետութեամբ կազմուեցաւ Նիւ Եորքի Յանձնախումբն։ Անդամ են նաև Տիկին Ռօպէրթ Էպպի, Փրոֆ. Պըթլըր, Մօրիս Ճէսըփ, Շիֆ, Սփէնսըր Թրասք (գանձապետ), Տիկին Վիլըր։ Տր. Այվազեան քարտուղար է։

ՈՒՍՏԸՐԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ

Ուստըրի մէջ նոյնպէս Յանձնախումբ մի կազմուեցաւ Օգ. 1ին, որոյ նախագահն է Տիար P.W. MOEN, Երկաթ թելի տիեզերահռչակ գործարանին պետն, և անդամքն են վսեմ. Սթիֆըն Սօլզպըրի, քաղաքին առաջին միլիոնատէրն և քաջածանօթ մարդասէրն, նաև Տիար Ճէյմզ Լօկըն, Տր. Նիքըլս, Ճարճ Նիւթըն և փաստաբան Պ. Փաթըր — ամենայն նշանաւոր և ազդեցիկ քաղաքացիներ որք աներկբայ պիտի յաջողին խոշոր գումար մի հանգանակել յօգուտ հայ տառապելոց։

«Հայքի» խմբագիրն, որ Ուստըր գնալով մի քանի օր նուիրեց այդ Յանձնախումբն կազմելու, խորին հաճութեամբ կը հռչակէ հրապարակաւ այն ազնիւ և գթուզիչ մարդասիրութիւնն որով այդ բազմազբաղ Ամերիկացիք յանձն առին այս բարերար գործն ի փրկութիւն բիւրաւոր Հայոց։ Ամերիկայի հարուստ դասակարգին ազնուութեան, շնորհալի փափկութեան և մարդասիրութեան վրայ նորէն և ալ աւելի զմայլելու պատուական առիթ մ'եղաւ այս մեզ, և վստահ եմք թէ բոլոր հայ ազգն տեղի պիտի ունենայ այս Յանձնախմբոց անձնուէր օրինակին վրայ երախտագէտ զգացմամբ սքանչանալու։

«Հայքի» խմբագրութեան, յօգուտ սովելոց, յանձնուած է 10 տոլար, ի Mrs. A. Gloverէ, Նիւ Եորքցի։

Եթէ մեր Ամերիկայի հայ հայրենակիցներէ ոև է ոք, հեռաւոր նահանգներէ, խմբագրութեանս դրամ յղել ուզէ այս նպատակաւ, կ'ընդունիմք և Հայքի մէջ կը ծանուցանեմք, և կը յանձնեմք գումարն Նիւ Եորքի Ամերիկեան Յանձնախմբին։

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ԾԻՋՈՒԻԹՔ, «ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՒ «ՄՇԱԿ»

Պուլկարիա աշխարհի խօսակցութեան նիւթ դարձած է այս միջոցիս։ Մեք Հայքըս մասնաւորապէս ուշադիր պարտիմք լինիլ այդ երկրի դարձուածոց, և ջանալ նորա փորձառութենէն օգտիլ։ Այսօր Պուլկարիա է ինչ որ թերևս Հայաստան պիտի լինի օր մի։ Եւ ինչ որ պիտի լինի օր մի Հայաստան, այժմէն սկսած է որոշուիլ. մեր ներկայ ընթացքն, բարքն, իմաստուն կամ անմիտ գաղափարներն, զգօն կամ խօլ արարքն բոլոր կը գործեն իրենց հզօր ազդեցութիւն ապագայ Հայաստանի բաղդն որոշելու, և անոր յաջողութիւններն ու դժբաղդութիւններն պատրաստելու։

Պուլկարիա Թիւրքաց հարստահարութիւններն մեզի պէս կրած, ապա յեղափոխած ու շնորհիւ ռուսական աջակցութեան ազատած լինելէ յետոյ, տուաւ զինուորական քաջութեան ապացոյց Սերպիոյ դէմ պատերազմին մէջ, տուաւ նաև

վարչական կորովոյ և քաղաքական թափանցողութեան ապացոյց յանձին Սթամպուլոֆի։ Սա «այն մէկ մեծ մարդն էր զոր արտադրած էր Պուլկարիա.» և այն միակ հայրենասէր գործիչն որ ստեղծեց զանկախ Պուլկարիան։ Եւ այժմ աշխարհ սոսկացած կը մնայ ի լուր այդ մեծ մարդուն ու անկեղծ հայրենասիրին յօշ յօշ պատառմանն ի ձեռն իւր իսկ հայրենակցաց։

Այս զարհուրելի դէպք լի է դասերով։

Քաղաքական կիրքն կուրացուցիչ ոյժ ունի։ Զոհին հակառակորդներն այնպէս համոզուած էին թէ Սթամպուլոֆ Պուլկարիոյ ՁՆասած էր և պիտի ՁՆասէր իւր «Պուլկարիա վասն Պուլկարաց» քաղաքականութեամբն։ Ուրեմն, տրամախոհեցին նոքա, պէտք է սպաննել այս ՁՆասակար մարդն... Եւ սպաննեցին զնա։

Անմտութեամբ լի խորհուրդ և յետին վատութեան գործ։

Դիցուք թէ արդարեւ թիւր էր Սթամպուլոֆի քաղաքականութիւնն, դիցուք թէ նա սխալած էր. միթէ կարելի՞ էր երկբայիլ նորա անկեղծութեան, նորա հայրենասիրական զգացմանց մասին։

Եւ ի՞նչ հոգեկան պիղծ վիճակ կը ցուցնեն անոնք որք մահուան կը դատապարտեն անկեղծ հայրենասէր մի, նորա ենթադրեալ սխալին համար։

Եթէ Սթամպուլոֆի քաղաքականութիւնն սխալ էր, կրնային զնա անպաշտօն թողուլ, կրնար կառավարութիւնն թոյլ տալ նմա մեկնիլ Պուլկարիայէն, իսկ ապագայ պատահականութեանց առջեւն առնլու նպատակաւ սպաննե՞լ հայրենեաց անձնուէր ծառայն— այդ ոճիրներու քան զամենայն եղեռնականն է։

Դնենք խնդիրն ծայրայեղ, տարօրինակ ձեւի տակ և հարցնենք— Պէ՞տք էր սպաննել Սթամպուլոֆ, եթէ նորա կեանքն ու ապագայ պաշտօնավարութեան հնարաւորութիւնն վտանգաւոր կը համարուէր Պուլկարիոյ համար։ Ո՛չ, կը պատասխանեմք. պէտք էր յանձն առնուլ հայրենեաց վտանգն մանաւանդ քան յանձն առնուլ վատութիւնն։

Եթէ անկեղծ գործիչ մի, հայրենեաց նուիրուած ու ծառայած որդի մի սպաննելու պայմանաւ միայն կարելի է փրկել հայրենիքն, ես կ'ասեմ թող կորնչի՛ հայրենիքն։ Պարտքն, երախտագիտութիւնն, ճշմարտութիւնն մեծ և գեր ի վեր են քան հայրենիքն։

Թող կորնչի հայրենիք, թող փլչի բոլոր աշխարհ, թող կործանի տիեզերք համայն— եթէ ոճիրն, սուտն, վատութիւնը պէտք է կանգուն պահեն զայնս։

Փութամ սակայն ասել թէ միայն բարոյապէս կուրացելոց և կրիւք արբեցելոց է հաւատալ և բանդագուշել թէ հայրենիքին կարելի է ծառայել ո՛և է վատութեան գործով։

Ասոր վերայ պնդել պէտք է չարունակ, զի մեր մէջ քիչ չեն այն տխմարներն որք կը կարծեն թէ ներելի է բարի նպատակաւ գործել նախ վատ գործ։

Մեր ազգին մէջ կան պակասամիտ մարդիկ որք կարծեցին թէ Թիւթիւնճիէֆ մատնչի դեր կը կատարէր ա՛յն անդրադոյն նպատակաւ թերեւս որ օր մի նըշանաւոր ծառայութիւն մի ազգին մատուցանելու առիթն յափշտակէր։ Բարոյական զգացումն մեր մէջ այնքան բթացած է ուրեմն որ հնարաւոր կը լինի այդպիսի կարծիք։ Ի՞նչ, հաւատալ թէ մարդ կարող է մատնչի դեր կատարել, մտածողութեամբ և դրական չարագործութեամբ, բայց միաք ունենալ քաւել այդ ամենն, որբել, արդարացուցանել այդ ամենն, և դիւցազնանալ յանկարծ մի օր ուրիշ մէկ մեծ դաւաճանութիւն մի գործելով այն մարդուն դէմ որուն նուիրած էր այնքան ատեն իւր դիւային ծառայութիւն...

Այդ միակ օրինակն չէ դժբաղդաբար։

Նիւ Եորքի մէջ ալ գտնուեցաւ հայ ոմն որ կոտորածին դէպքէն յետոյ իսկ Հէրալտի մէջ գովեց Սուլթանի հայրախնամ բարեսրտութիւնն, և ապա գնաց նորէն հայրենասիրի դեր կատարել հեռաւոր վայրեր ուր իւր անցեալն չէին ճանաչեր։ Եւ ահա անցեալ օր տեսայ երիտասարդ Հայեր որք համարձակեցան կարծիք յայտնել թէ այդ մարդ, այդպիսի գրութեամբ մի նախ Սուլթանի աչքն մտնել աշխատելով թերեւս հասնի անանկ դիւանագիտական պաշտօնի մի ի ծառայութեան Սուլթանին, յորում պատեհութիւն ունենայ Հայոց դատին ծառայելո՞ւ...

Մեր մէջ բարոյական կրթութիւնն ետ մնացած է, այդ յայտնի է, բայց չէինք կարծեր թէ բարոյական բնազդումն, խղճի փափկութիւնն ալ այդ աստիճան բը-

թացած լինէր։

Ցոռի, անվայել, կեղծաւոր միջոցներով բարի նպատակի մի ծառայելու յաւակնութիւնն կը ցուցնէ բարոյական անզգայութիւն, գարշելի ճիզուիթութիւն եւ եթէ ազգի մի մէջ այդ ախտ տարածուած է բաւական, յոյս չկայ նորա փրկութեան։

Օգ. 1ին Ուստըրի մէջ, Սասունցւոց նըպաստելու համար կազմուած ամերիկեան Յանձնախմբին նախագահն պատմեց, ի վերջ նստին, մի քանի դէպքեր Հայոց անբարեխղճութեան, ստայօղութեան մասին, տեղն ի տեղն, զոր ես խորին ամօթով լսեցի։ Մի քանի նշանաւոր Հայերու զարհուրելի անբարեխղճութիւնն բովանդակ Ուստըրի Հայ գաղթականութիւնն թաղած է անպատուութեան մէջ, ուր Հայք զուգապատիւ կը համարուին Չինացւոց։

Կրնայ առարկուիլ թէ մէկ կամ երկու մարդու անբարեխղճութիւնն պէտք է արատ չհամարուի գաղթականութեանըն, կամ բոլոր ազգին։ Այս առարկութիւն ոյժ կ'ունենար եթէ գաղթականութիւնն փոխանակ պատուելու այդպիսի մարդ մի և զայն իւր քուէով պաշտօնի կոչելու, վարուած լինէր նորա հետ այն անհամարհանօք որում արժանի էր։

Այս երեւոյթ Ուստըրի մէջ միայն չէ տեսնուած, այլ և ի Նիւ Եորք, և ի Կ. Պօլիս, և Թուրքիոյ մեծ քաղաքներում, և ի Թիֆլիս...

Անբարեխիղճ մարդն մեր մէջ պատուաւոր մարդ է եթէ քիչ մի ճարտարութիւն, քիչ մի տեղեկութիւն, քիչ մի հարստութիւն ունի։

Մխիթարական փոփոխութիւն մի կ'երեւի մեր մէջ, թէպէտ չէ տակաւին բաւական նշանաւոր. ահա «Հայրենիք» թերթ մ'ունինք ի Կ. Պոլիս, ուր արդարասիրութիւնն, ուղղամտութիւնն ստորադաս չեն նկատուիր հարստութեան և սնապարծ փառասիրութեան։ Հայրենիք և Մշակ անբարոյական և անպարկեշտ միջոցներով ազգին ծառայողներուն կուտան հարուածըն անաչառ։

Դառնանք այժմ Պուլկարիոյ։ Հոն ալ Սթամպուլօֆի ձգանումն պուլկարական բարքերէ անջատ՝ պատահական երեւոյթ մի չէ։ Անկէ առաջ ալ քաղաքական դաւաճանութիւններ եղած էին։ Նոյն իսկ մեծ հայրենասիրին բազմամեայ և անշահնչ մարմինին առջեւ անզգայ մնացին հակառակորդաց սիրտք, և յուղարկաւորութեան հանդէսն երեք անգամ ժխորեցին, օտար դիւանագիտական ներկայացուցչաց ներկայութեանն, և խայտառակեցին ազգային պատիւն։ Շատ կարելի է որ Սթամպուլօֆի բարեկամք ալ նորա դաւաճաններէն վրէժ լուծեն, և դարձեալ խանչեարի հայրենասիրութիւնն փայլի արիւնոտներկ, մանաւանդ եթէ Ֆէրտինանտի կառավարութիւնն չփութայ պատժել Սթամպուլօֆի սպանիչներն։

Համառօտ առելով, հայրենիքի ծառայելու անմիտ խելքով Սթամպուլօֆն վիրաւորողներն և նոցա գաղանի աջակիցք տուին սոսկալի հարուած մի պուլկարաց ազգային պատւոյն, և հարուած մի Պուլկար հարենեաց։ «Թայմզ» յիշուի կասէ թէ «Ոյք և եղած լինին այս խժդժական ոճրի հեղինակք, և ինչ և եղած լինին նոցա շարժառիթք, նոքա ծանր վնաս մի հասուցին իրենց երկրին բնաւորութեան և ապագայի յոյսերուն։» Եւ արդարև սեւ ամպերով մթագնած կը մնայ այժմ Պուլկարիոյ քաղաքական հորիզոնն։

Այս ոճիրն Պուլկարիոյ պատւոյն կը դպչի այն պատճառաւ որ կը ցուցնէ թէ Պուլկարիոյ մէջ բարքերն դեռ բարբարիկ են, դեռ հին օրերու խմբային վրիժառութիւններն, խնդիրներն դանակով լուծելու անքաղաքակիրթ կերպերն կը մնան վըտանգաւոր չափով։ Բայց պէտք է գիտնալ, պէտք է Պուլկարաց ալ մեզ Հայոցըս ալ, գիտնալ թէ Եւրոպական քաղաքակիրթ ազգաց կարգն անցնիլ և յարգուիլ և միանգամայն Բրդու պէս գնանկով փաստաբանել և ցեղապետական վրիժառութեան մեթոտներ գործածել քաղաքական գործոց մէջ՝ անկարելի է։

Իբրեւ եզրակացութիւն ասենք թէ մեք Հայքս շատ կարօտ եմք քաղաքական դաստիարակութեան, և պէտք է որ ներկայ յուզմանց մէջ ալ լուրջ ուշադրութիւն նուիրեմք մեր գործելու եղանակաց եթէ կ'ուզեմք որ մեր ջանք և զոհաբերութիւնք պսակուին յաջողութեամբ։

Ոմանք տալար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծրարով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կամ Րէճիսթըր անել նամակն կամ մընի օրտըր յղել առ ի ապահովութիւն։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Այս դաշնակցութիւն, որոյ անդրանիկ ճիւղն հաստատուած է ի Նիւ Եորք, անցեալ Յունիսին, նպատակ ունի

Օսմանեան Հայաստանն Թրքաց լծէն ազատելու համար ի գործ դնել ամեն ջանք և միջոցներ ըստ պահանջել ժամանակին և պարագայից, և աշխատիլ այնպիսի վարչական դրութիւն մի հաստատել անդ որ ապահովէ կեանք, ստացուածք, պատիւ, և մամլոյ ու խղճի ազատութիւն, և նպաստաւոր լինի Հայոց ազգային զարգացման։

Այս դաշնակցութիւն կը յուսայ արագապէս ճիւղեր արձակել Միացեալ Նահանգաց հայ գաղթականութեանց մէջ և անկէ դուրս։

Ինչո՞ւ այս նոր դաշնակցութիւն. ի՞նչ է սորա սկզբունքն. մի՞թէ արդէն գոյ եղող կազմակերպութիւններն բաւական չէի՞ն։

Բացատրենք։

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ է այս Դաշնակցութիւն։ Յայտնի է թէ Հայոց մէջ երեւան ելած են մի քանիներ որք իրենք գիրենք «յեղափոխական» և «ընկերվարական» միանգամայն կը հռչակեն, և ունին օրկաններ։ Ո՛վ որ ուշի ուշով հետեւած է դոցա բանից և ընթացից, դիտած պէտք է լինի թէ դոցա բուն նպատակն չէ Հայոց Հայրենիքի ազատութիւնն, թուրք վարչութիւնն, այլ բովանդակ Եւրոպիոյ «սօցիալական յեղափոխութիւնն» որոյ շնորհիւ պիտի փոխուին «արմատապէս թէ տնտեսական ու քաղաքային յարաբերութիւնները և թէ մարդկային հասարակութեան ամբողջ կազմակերպութիւնը»։

Այս սօսիալիստ դաւանանքն որ Եւրոպիոյ երկրորդական կարգի մի քանի գրչաց պակասաւոր ըմբռնումն է, և որ կրկին ու կրկին ջախջախուած է ծանրակշիռ փաստերով առաջնակարգ տնտեսագիտաց և մեծագոյն ընկերաբանից ու իմաստասիրաց, միամիտ բազմութիւն մի դէպ իրեն կը քաշէ, ի միջի այլոց մի քանի հայ ուսանողներ ; Այս վերջնոց խելքով, Արեւելեան խնդիրն կրնայ, շնորհիւ հայկական յուզմանց, առիթ լինել մերձեցող մեծ եւրոպական պատերազմին, որոյ ար-թիւ «միջազգային սօցիալական յեղափոխութիւնն» կացող պիտի լինի տանիլ իւր յաղթանակ՝ փոխելով «մարդկային հասարակութեան ամբողջ կազմակերպութիւնը»...

Այդ մե՛նծ, համամարդկային վերակազմութեան փառաւոր գործին համար միջազգային պատերազմ պէտք է բռնկի, և Հայաստան կրնայ գործածուիլ իբրեւ լուցկի, փոյթ չէ եթէ Հայաստան սպառի...։ Բայց եթէ չսպառի, ու Հայաստանի ժողովուրդք ալ, թուրք, հայ, քուրդ են. բաղդ ունենան «սօցիալական» դրախտին արժանանալու, աւելի լաւ....։

Մեր սօսիալիստներուն համար ոչ թէ Թուրքիոյ վարչութիւնն միայն է վատ, այլ և բոլոր եւրոպական պետութիւնք փտած, նեխած, անիրաւ են, և պէտք է մի «սարսափելի դղրդոցով» փլչին, քայքային և տիեզերական աւերակաց վերայ կանգնի «սօցիալական կազմակերպութիւնը»։

Ուրեմն մեր սօսիալիստք հակառակ են թէ՛ Թրքին, թէ՛ Անգլիոյ, թէ՛ Ֆրանսիոյ, թէ՛ Գերմանիոյ, ի մի բան բոլոր քրիստոնեայ տէրութեանց։

Իսկ մեք, Հայրենասիրական Դաշնակցականքս, կը պժգամք Թուրք վարչութենէն, կը գանիմք արեւելքի կեղծաւոր, գծուծ, ստասէր, սարկային բարքերէն, և կը սիրեմք եւրոպական ազգաց ներկայ բաղդատաբար ազատ, բազմաժէնդական դրութիւնն, մամլոյ և կրօնի ազատութիւնն, կը հաւանիմք ժողովրդի ստուարագոյն մասին բարեկեցութեանն, կը ըղձայլիմք բարձր դասակարգի մարդոց սիրոյն և աշխատութեանց վերայ ի բարւոքումն ստորին դասուց վիճակին, բարձր համարում կը տածեմք եւրոպականաց և Ամերիկացւոց ճշմարտախօսութեան, ինքնայարգութեան, քաղաքավարութեան, մեծահանձնութեան մասին, որում հասնելու համար արեւելեանք պարտին երկար ատեն կրթուիլ և զարգանալ։

Ի հարկէ Եւրոպա կատարեալ չէ, դեռ բազում բարեփոխութեանց կարօտ է, և շատ կրթութեան, բայց բացարձակապէս կը մերժեմք այն սօսիալիստական համոզումն թէ Եւրոպա «սօսիալիստ» վերակազմութեան կարօտ է յեղափոխութեան միջոցով։

Հեզաւապէս մեք, Հայրենասիրականքս

Եւրոպեան արդի կարգերուն կործանման բաղձալէ հեռի, Եւրոպան նախատելէ հեռի, կը զգամք թէ Եւրոպիոյ համակիր անջակցութեան անհրաժեշտ պէտք ունի հայ ազգն Թրքի բարբարոս լծէն պրծելու համար։

Եւ իբրեւ ատոր տրամաբանական հետեւանք, մեք կը յարգեմք Եւրոպեան հանրային կարծիքն, կը յարգեմք պետական մարդիկն, և կ'ուզեմք որ մեր ընթացիւք չգայթակղեցուցեմք զնոսա, կը ջանամք որ մեր յեղափոխական ջանքերն որքան հնար է անարատ մնան անբարոյականութենէ, սահմանութենէ, խարդախութենէ, եղեռնական միտումներէ, և որ մեր բոլոր ընթացքն լինի իրաւամբ զայրացած ժողովրդի մի արդար ընթացքն ընդդէմ թ. բռնապետութեան, և ցոյց տամք գգ. նութիւն, իրաւասիրութիւն և ուղղամտութիւն։

Եւրոպիոյ հանդէպ մեր կացքն ուրեմն տարբեր պիտի լինի անկէ զոր մեր սոսիալիստներն ունեցած են, և ոչ նուազ տարբեր պիտի լինի մեր կացքն հանդէպ հայ եկեղեցւոյն, կաթողիկոսին, պատրիարքին և ազգային աւանդութեանց։ Մեր նպատակն չպիտի լինի ջնջել այդ ամենն իբրեւ փտած բաներ, այլ բարեկարգել և յարմարցունել ներկայ ժամանակաց պահանջումներուն։

Մեզ չատ պարզէ, և պիտի զարմանամք եթէ դեռ ամեն ոք պարզ չի տեսներ, թէ մեր սոսիալիստական յեղափոխականներն, թուով աննշան բայց հռչակաւոր աշխարհածանօթ, չեն ոչ է իմաստիւ Ազգին ծոցէն բիսած գործիչներ, ազգային գաղափարով տոգորուած, ազգին, մանաւանդ Թրքահայոց, հոգեբանութեան ներհուն, այլ ռուսիոյ մէջ նախնական կրթութիւն մի առնելէ յետոյ, որ ազգային հանգամանք չէ ունեցած, անցած են ի Զուիցերիա, ուր երկրորդական ուսմանց նուիրած են մի քանի տարի, տոգորուելով ռուս և այլ սոսիալիստ տաքգլուխներու գաղափարներովն։ Ուրիշ խօսքով և աւելի համառօտ ասելով, այդ մի քանի սոսիալիստ գործիչներ բնական շարունակիչներ չեն Հայոց ազգային ձգտմանց, հայրենասիրական գործունէութեան նորագոյն և աւելի զարգացած մէկ փուլն չեն ներկայացուներ, այլ բոլորովին օտարոտի, բռնագրօսիկ, անբնական խառնուրդ մ'են մեր մէջ։ Նոքա ներկայիս մէջ զեւրոպեան կարծիքն քիչ գայթակղեցուցած չեն, և ապագային մէջ ալ, եթէ ասպարէզ գտնեն, մեծամեծ չփոթութիւններով և մոլեռանդ արմատականութեան մի բոլոր չարիքովն պիտի չարչարեն Հայոց հանրապետական, իշխանապետական կամ ոչ է վարչական դրութիւնն։

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՍԱՍՆՈՅ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵՍՆ

Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Օգոստոս 3, 1895

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Սէնթ Պարթօլոմէ եկեղեցւոյն ընդարձակ սրահում, Օգ. 3ի չարաթ երեկոյին, մի լուրջ և խոհուն բազմութիւն Հայոց ներկայ էր ասնելու Սասնոյ կոտորածին առաջին տարեդարձն։ Պրուքլինէն, Փէթէրսընէն ու այլ մերձաւոր քաղաքներէ ևս հայրենակիցներ ներկայ էին։

Հանդէսն սկսաւ ժամ ութին, երգեցիկ խմբին մէկ աւուր պատշաճի երգովն։ Ապա տեղապետն, Մ. Ս. Գաբրիէլեան, մի քանի խօսքով բացատրեց հանդէսին լուրջ հանգամանքն և ներկայացոյց զառաջին ատենախօսն, զՏր. Անդրանիկ Այվազեան։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՏՐ. ԱՅՎԱԶԵԱՆԻ

Սասուն, ասաց նա, մինչև տարի մ'առաջ գրեթէ անծանօթ մնացած էր, սակայն տարիէ մ'ի վեր, կոտորածէն հետէ, նորա անունն, նորա գիւղերու և լեռներու անուններն, ոչ միայն Հայութեան այլ բովանդակ քաղաքակիրթ աշխարհի ծանօթ և նուիրական գործուեցան։ Թշնամին ուզեց անօրինակ վայրագութեամբ ջնջել անհետացունել այդ գաւառն, և ահա նորա չարադէտ բաղձանաց հակառակ, Սասուն կ'ապրի նորոգեալ ու փառաւոր մի կեանքով աշխարհի զմայլեալ սրտին մէջ «ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՌ» ազնիւ հեղի-

նակն Տ․ Կրին, Միացեալ Նահանգաց ողբացեալ Պետական Քարտուղարին, Կրէչէմի հետ, Հայոց մասին տեսակցութեան ատեն, անցեալ տարի, քարտուղարի կատակածոտ հարցին թէ «ո՞ր է Սասուն», պատասխանեց մատն դնելով աշխարհացոյց տախտակին այն կէտին վերայ և ասաց «ահա հոս էր, հոս պէտք է լինէր Սասուն, բայց ոչ ևս է։» Ցայնմ հետէ Խնդիրն նոր երեւոյթ առած է․ այժմ ոչ ոք կ'երկբայի Սասնոյ գոյութեան, Սասնոյ անմահութեան վերայ։ Թշնամւոյն դիտաւորութիւնն էր այդ կոտորածով բառնալ ի միջոյ Հայկական խնդրոյն գոյութիւնն, և ահա, ի մեծ չուարումն նորա մոնկոլեան մտաց, Հայոց դատն, անիրաւեալ ազգի բողոքի ձայնն, սրտայոյզ հեչտերով կը հնչէ աշխարհի մէկ ծայրէն ցմիւսն։

Սասունցիք, որք Թրքի սրովն ինկան, այնքան աներկիւղ և քաջարի դիմադրութենէ յետոյ, առին դիւցազնի տիտղոսն այս աշխարհիս մէջ և ընկալան մարտիրոսի փառաւոր պսակն ի հանդերձելումն։ Ներշնչուինք ուրեմն մեր այդ անմահացեալ եղբարց և քոյրերու ոգւովն և նուիրեմք զմեզ հայրենեաց արդար դատին։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Տ․ ԳԱՊԱՏԱՅԵԱՆԻ

Խմբակին կողմանէ երգ մի երգուելէն յետոյ, ատենապետն ներկայացոյց երկրորդ ատենախօսն, զՏ․ Գապատայեան, որ նոր եկած է յԱմերիկա, Զմիւռնիայէն, և որ Ցունաց հնապատմական դիցաբանութենէն, Կորկոն Մէտիւզէի օրինակն պատմեց հետաքրքրական կերպով և ապա բաղդատութիւն մի հաստատեց Հայոց թշնամի միապետի և Մէտիւզէի միջեւ, և Մէտիւզէի գլուխն կարող Պէրսէոսի նմանցուց հայ յեղափոխութիւնն, որ թէև ի հզօրաց անարգուած է, այլ կը խոստանայ կատարել յԱստուածոց անիծուած Զարին դէմ այն ինչ որ մեծ զօրութիւնք կը վարանին ի գործ դնել։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Մ․ Ս․ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

«Սասուն» անգլիերէն երգն խմբակին կողմանէ երգուելէն յետոյ, ՀԱՑՔի խմբագիրն ասաց․—

Ճշմարիտ է թէ Սասնոյ նահատակութիւնն զՍասուն ճանչցուց Հայութեան և զՀայաստան՝ աշխարհի։ Դաշտի Հայն հարստահարութեանց ծանրութեան ներքեւ դարերով խոնարհած, ընկճած է, կը շողոքորթէ զբռնաւորն, կը համբուրէ զարնողին ձեռքն, կը սողայ ժանտին առջև, իսկ Սասնոյ Հայն, բարձր ի գլուխ կեցած իւր լերան վերայ, կուրծքն տնկած, զէն ի ձեռին, կ'արհամարհէ թշնամւոյն սպառնալիքն։ Նա լեռան որդի է, երկաթի ընկեր և երկաթի պէս ամուր։ Նա հեռու է քաղաքաց ախտերէն, և ֆիզիքականով ու բարոյականով սխրալի նմոյշ մ'է պարզ մարդկութեան և տիպար ազնիւ Հայութեան։

Թուրք կառավարութիւնն, խոստովանիմք, յառաջագոյն քան զմեզ ճանաչեր է զՍասուն։ Ճմլած էր զԶէյթուն, ուզեց ճմլել և զՍասուն։ 1893ին, քրդական բանակ մի արշաւեց Սասնոյ վերայ, սակայն մեր քաջաց կրակէն զարհուրած՝ ետ գնաց սրտաթափ։ Այս ալ եղաւ նոր յայտնութիւն մի Դրան համար, և Համօ սկսաւ անդաճել և խոճոճել թէ ինչպէս պէտք էր ջնջել այդ հայ զօրութիւնն սպառնալից։ Ծրագիրն պատրաստուեցաւ, և 1894 ին դրուեցաւ ի գործ։ Քուրդք թուով իբր 30,000, զօրավիգ ունենալով ի թիկանց Թրքի կանոնաւոր բանակ, սկսան յարձակումն։ Սասունցին այս անգամ ալ չահաբեկեցաւ։ Թող գա՛ն, գոչեց նա, թող գա՛ն։ Ես ներսս ունիմ Հայկ և Տիգրան, իմ հայրերն են Վարդան Վահան։ Զայն քաջ նախնեաց կը գոռայ յիս— Զա՛րկ․ զա՛րկ չարի պաշտօնէից․ զա՛րկ սրբապղծին, զ'արկ բարւոյ և բարութեան թշնամեաց։

Եւ Սասունցին զարկաւ։ Քու՛րդ, առ ճակտիս, ա՛ռ կզակիդ, սեւ սրտիս առ, աջ ձեռքիդ առ, ա՛ռ ոտքիդ։ Ա՛, կը փախչիք։ Առ սրունքիդ, առ կռնակիդ, առ ծոծրակիդ, ինկիր, գլորէ, փչէ չար հոգիդ, դո՛ւ ալ, դո՛ւ ալ, օ՛ն փռուէ՛, կամ լուր տար քո ընկերներուն որ ալ չգան մերձ ի Սասուն։

Եւ քուրդ բանակն ահարեկ ետ մղուեցաւ ու կանոնաւոր տաճիկ բանակն ըստիպուեցաւ սկսիլ պատերազմն— պատերա՞զմն, ո՛չ, խաբեբայութիւնն, անգթութիւնն, բարբարոսութիւնն—անզէն և անմթեր այրերն սպաննել, գիւղերն ամբակծել, անպաշտպան կիներն մորթել և մանուկներն խողխողել։ Սասունցիք, որք Քրդաց դէմ պատերազմած էին իբրև Տիգրաններ, թնդանօթով և մեծ բանակաւ արշաւող տաճիկ գնդերու առջեւ նահատակեցան իբրեւ Վարդաններ։ Կիներն,

կոյսերն, մահն կամաւ յանձն առին, իրենց կեանքն տուին որ չարատաւորի իրենց պատիւն, որ չուրանան լոկ շրթամբ իսկ, իրենց լոյս հաւատն, որ չլքանեն իրենց ազգայնութիւնն։ Համոզման, զաղափարի, իտէականի համար մեռնիլն է նահատակութիւն, և ահա Հայ Ազգի ծոցէն ելան անցեալ տարի հազարաւոր նահատակք, և ոգի տուին ոչ միայն Հայութեան այլ և օրինակ բովանդակ մարդկութեան։ Այժմ ամեն երկրի սուրբք և առաքինիք կողջունեն ի Սասուն իրենց ճշմարիտ եղբայրներն ու քոյրերն և իրենց թուքն կը տեղան բարբարոս տաճկի երեսին։

Եւ մեք որ այսօր կը տօնեմք մեր ազգակից դիւցազանց այդ շահատակութիւնը, թող ներշնչումք նոյն ոգւով և թող մեր խղճերու մէջ ևս, ի մեծ ճգնաժամուն, հնչէ մեր քաջ նախնեաց ձայնն— ՁԱՐԿ։

ԿԵՑՑԷ՛ ՍԱՍՈՒՆ։

Ի վերջ ժողովոյն ատենապետն առաջարկեց որ հանդիսականք յոտնկայս երեք անգամ կեցցէ Սասուն որոտան, և խանդավառ աւիւնով գոչեցին—

ԿԵՑՑԷ՛, ԿԵՑՑԷ՛, ԿԵՑՑԷ՛ ՍԱՍՈՒՆ

Այս ժողովն եղաւ նախաձեռնութեամբ Հայոց Հայրենասիրական Դաշնակցութեան Նիւ Եորքի Դիւանին, իբրեւ առաջին հրապարակային հաւաքումն։ Ժողովին զեկավարութիւնն ընդհանուր գոհունակութեան նիւթ եղաւ, վասն զի սկսաւ ժամ ճիշդ ութին, որպէս ծանուցուած էր, և վերջացաւ 10ին։ Հիւրընկալներ կային ոոք եկող Հանդիսականներն կ'առաջնորդէին ի նստարան ըստ կարգի։ Ոչ մէկ չփոթութիւն, ոչ մի աղմուկ երբէք վրդովեց ժողովոյն անդորրութիւնն։ Այս ժողովն ապացոյց մ'էր թէ մեր հայրենակից պանդուխտներ ընդունակ են քաղաքակիրթ ժողովրդի մի արժանաւոր կանոնաւորութեամբն հանդէս վայելելու եթէ հանդիսին քաղաքակիրթ կարգադիրներ գըտնուին։

Կը խնդրեմք որ մըսի օրտըրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (եդ ճիւղ)ին ձեռքով ղրկեն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Յուլիս 6, 1895

Թուրքը քաղաքական խնդրոյ մի մասին նեղը մնացած ատեն ժամանակ վատնելու միջոցներ կը գտնէ, և այդ ժամանակամիջոցի պարագաներէն օգտուիլ կը ջանայ։ այս դրութիւն երբեմն կը յաջողի, սակայն քաղաքագիտական հեռատեսութիւն չունենալուն շատ անգամ վնասած է իրեն։ հաւանականաբար Հայկական Խնդրոյ մասին իւր բռնած ընթացքն վտանգաւոր ելք մի պիտի ունենայ։ Գաղտնապէս իրեն սիրտ տուող Աւստրիան և Գերմանիան համոզուած են առ այս և կը ջանար համոզել զինքն որ փութայ իրից տէրութեանց կոգմանէ իրեն ներկայացուած ծրագիրն ստորագրելովն վերջ տայ այս կնճռոտ խնդրոյն։ Սալզպրի ժողովրդեան կամաց առջեւ խոնարհելով՝ գուցէ ստիպեալ հրահանգ տուած է արդէն տեղւոյս անգլիական դեսպանին չարունակել Հայկական Խնդրոյ մասին Կլատսթոնի և Ռոզպէրիի քաղաքագիտական ընթացքն։ սակայն Թուրքն՝ հաւանականաբար Գաղղիոյ և Ռուսիոյ պահանջոտութեան նուազութենէ քաջալերեալ դեռ կ'երկարէ խնդրոյ լուծումն։

Իմացաք անչուշտ Գաղիոյ առ անգղիական կառավարութիւնն ըրած առաջարկն— «Գոհացում տուր ինձ Եգիպտոսի խնդրոյ մասին որպէսզի ես ալ ջերմորէն միանալով ընդ քեզ՝ հաստատեմք մի Հայաստան, ապա թէ ոչ կը թոյլատրեմ Ռուսիոյ որ դրաւելով արեւելեան Թուրքիան վերջ տայ Հայկական Խնդրոյ։» Մեծ եպարքոսս անչուշտ Գաղիացւոցմէ օրինակ առնելով ըսած է անգլիական կառավարութեան— քաշուեցէք Եգիպտոսէն և Ձեր ներկայացուցած ծրագիրն ընդունիմք իւր ամբողջութեամբ։ Այս առաջարկներ կէս-պաշտօնական ձեւով տեղի ունեցած են. իսկ գալով պաշտօնականին, երեք կառավարութեանց ներկայացուցած ծրագրոյ ինչ ինչ կէտերու մասին օտար. կառավարութեան ըրած դիտողութիւններն ջրած են ոչ միայն այդ երեք տէրութիւններն, այլ ևս ընդ նոսին Իտալիա և Գերմանիա։ Թուրքն կրկին պա-

տասխանագրեր կը պատրաստէ, և միշտ նոր պայմանաժամեր կը պահանջէ և կընդունի չնորհիւ Սալզպէրիի, սակայն անշուշտ այս դրութիւն ալ իւր վախճան ունի։

Ներկայէս շուրջ տասն օրեր առաջ Սրբազան Պատրիարք Հայրն ևս մի դիտողագիր ներկայացուց Բ. Դրան, յորում իրաց ներկայ վիճակի մէջ ժողովրդեան յուզումն պարզելով՝ բարեկարգութեանց գործադրութեան փութացումն կ'առաջարկէր՝ յաւելլով որ՝ հակառակ պարագային պատասխանատու չէ ժողովրդեան։ Այս դիտողագիրն մեծ յուզում պատճառած է Բ. Դուռն և Սուլթանի բարկութիւն առթած է։

Թուրք երիտասարդութիւնն կ'աշխատի համոզել Հայերն որպէս զի գոնէ 50,000 անձով մեծ ամբոխ մի կազմելով երթան և ցոյց մ'ընեն Եըլտըզի Պալատի առջեւ, այլք նոյն իսկ Պալատն մտնել ևս կ'առաջարկեն, խոստանալով թէ իրենք ալ պիտի աջակցին ի հարկին։ Հայք կը պատասխանեն, գուք յառաջխաղաց եղէք և մենք կը հետևինք։

Սակայն երկիցս հրաժարական տուաւ է չընդունուեցաւ. կառավարութեան երկու մեծ գողերուն Հասան Ռաշայի (ծով. նախ.) և Բտուան Փաշայի (քաղաքապետ) հրաժարումն կը պահանջէ։ Սուլթանն չի կրնար հրաժարեցնել զայնս՝ զի անոնց գաղանի ընկերն է։

Շուրջ 10 օրեր առաջ 300ի չափ սոֆթաներ Սամաթիոյ Հայոց հետ ընդհարում մուներցան։

Հայ գործիչներ որոշած են վատ Հայերու կենաց վերջ տալ։ Վերջերս ատրճանակի երկու ծանր հարուած ընդունեց Թիւթիւնճիէֆն։ Գնդակի մին բարձքն ծակելով դուրս ելած է, միւսն սրտին մօտէն ներս մտած է և դեռ կուրծքին մէջ է։ Բժիշկներ դարմանելէ խոյս կուտան։

Մի քանիներու համար ալ վճիռ արուած է, յորոց մին է Մամբրէն։ Այս վատ կարգուրացն տունէն դուրս ելնելու չի յանդգնիր։ Վերջերս Պատրիարք Հօր մի զղջման գիր ուղղած է, խոստանալով սիրայօժար ընդունիլ իրեն սահմանուած ապաշխարութիւնն, Պատրիարք Հայրն վանք մը երթալու պարտքն ծանուցած է։—Ո՞րչափ ժամանակ, կը հարցնէ Մամբրէ—ժամանակամիջոնն չեմ կրնար որոշել կը պատասխանէ Պատրիարք Հայրն, որչափ ատեն որ Կրօնական ժողովն պէտք զգայվատ կարգուրացի գործին չգար այդ պայման։

Փրկչի Հիւանդանոցի տօնէն ի վեր 120ի չափ երիտասարդներ բանտարկուած են։

Երկու օր առաջ, Սահակայ և Մեսրոպայ տօնին օրն միջադէպ մի պատահած է Հիւանդանոցի պարտէզն։ Սամաթիացիք սովորոյթ ունին կիւրակէ և տօն օրերը Հիւանդանոցի պարտէզն պտոյտի երթալ, Սահակայ Մեսրոպայ տօնին առթիւ Սահակեան վարժարանի սանունք և այլ շատ մը երիտասարդներ և ընտանիքներ հիւանդանոց կերթան, ընդ ամենն շուրջ 2,000 հոգի, պարտէզն են եղեր նաև որբանոցի սանունք։ Այսչափ բազմութեան ի մի վայր հաւաքումն զգացումներն կ'արթնցնէ և կը սկսին երգել ազատ երգեր յորս և Սասոնի երգն (Հայքի մէջ հրատարակեալն)։ Բազմութեան մէջ գտնուող երկու լրտեսներ կ'ուզեն տեղեկանալ երգուածին, կը մերժուին։ Լրտեսներն կը խնդրեն որ ձեռքերնին եղած թղթի կտորներէն մին իրենց ծախուի, մինչև մէկ մէճիտ տալ կառաջարկէ լրտեսն, երգողներ չեն հաւանիր, լրտեսն կը բռնանայ, տղայք կը ծեծեն զայն։ Երկրորդ լրտեսն կը ջանայ ամենէն աւելի հարուած տուողն ձեռք անցնել, ինքն ալ իւր ընկերոջ բաղդին կ'արժանանայ և կը վիրաւորուի իսկ։ Վիրաւորեալն Ցունաց հիւանդանոցն կ'ապաստանի և անդ դարման կը գտնէ։ Ժողովուրդն կը ցրուի, երիտասարդք մինչեւ Սամաթիա կ'երգեն, և պահականոցի առջև կեցցէ՛ Հայաստան կը գոչեն։ Ոստիկանութիւնն որ երեկոյին հիւանդանոց կը հասնի, համառօտ հարցաքննութենէ մը վերջ Վարդան Սարաֆեան անուն երիտասարդն կը տանի, յաջորդ օրն հիւանդանոցի գրագրի օգնականն և Սարիմ անուն Հայ հիւանդն կը պահանջեն։ Սամաթիոյ վարժարանի դասատիարակներն և շատ մը երիտասարդներ կը ձերբակալուին։ Սամաթիոյ վարժարանն ի հարկէ սատիպեալ փակուած է։ ԾՈՎ

Տիար Տ. Շուշան հաճած է յանձն առնուլ «Հայքի» գործակալութիւնն յՈւստոր։ Բաժանորդք կրնան նմա վճարել գինն։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼԻՍ

Կ. Պոլիս, 13 Յուլիս, 1895

Երեք Տէրութեանց ծրագրի ինչ ինչ մասերն սոսումնասիրելու պաշտօնով կարգուած մասնախումբն իւր աշխատութիւններն աւարտեց և տեղեկագիրն մատոյց Սուլթանին։ Կ'ըսուի թէ՝ այդ մասնախումբն՝ Պոլսոյ հսկող մարմնոյ գոյութեան պէտքն աւելորդ համարած է, բարեկարգեալ գաւառաց բարձր գոմէսէռն կ'ընդունի՝ սակայն ոչ թէ Եւրոպիոյ հաւանութեամբ ընտրուած՝ այլ Սուլթանի կողմանէ կարգեալ։ Անշուշտ այսպիսի փոփոխութիւն մի կրող ծրագիր անընդունելի է մեզ և նոյն իսկ Եւրոպիոյ համար։

Թուրք երիտասարդութեան ճիգերն միշտ խանձարուրի մէջ իսկ կը խեղդուին։ Վերջերս պատերազմական վարժարանէն 35 աշակերտներ աքսոր ղրկուեցան իրենց ազատ գաղափարաց համար։ Սուլթանն բարկանալով ըսեր է իսկ թէ «փակեցէք յուզմանց կեդրոն այդ վարժարանն,» իւր ցասման հանդարտելէն վերջ զգացուցած են այդպիսի մի հրահանգի անպատեհութիւնն։

Հայաբնակ գաւառաց ընդհանուր քննիչ կարգեալ Շաքիր փաշան դեռ աստ կը մնայ։

Նուրեան և Սէֆէրեան (Նշան) Հնչակեանց կողմանէ դատապարտութեան թղթեր ընդունեցին։ ահուդողի մէջ են։ Սոցա վերջինն իւր ընդունած նամակն Պատրիարք Հօր տարած է ցոյց տալ։ պատասխան ընդունած է թէ, ինքն միթէ՞ չարագործներու պետն կը կարծեն։

Թիւթիւնճիէֆ երեք օր առաջ մեռաւ։

Վանի և Կեսարիոյ մէջ շարժումներ տեղի ունեցած են։ Վիրաւորեալներ և մահեր ունեցած եմք։ թւոց մասին ստոյգ լուրեր չկան դեռ։

Անգղիայէն ի նպաստ Սասունի հասած 1,000 անգղ։ ոսկւոյ նպաստն Պատրիարքարանի հրահանգին համաձայն կը բաշխուի։ Սուլթանին նուիրած (անուանական) 1,500 ոսկիէն ոևէ գումարդեռ ժողովրդեան ձեռք հասած չէ։ Պատրիարք Հայրն մի ժապաւինեալ տետրակ յանձնած է մի մասնախմբի, Սասունի ի նպաստ հանգանակութեան համար։ Ստորագրեալ գումարն հաւանականաբար 5, 000 ոսկւոյ պիտի հասնի ի Կ. Պոլիս։

Ազարեան սպառնալից նամակներ ընդունած է ինքն ևս Սասնոյ հանգանակութիւն մի բանալու համար, ահուդողի մէջ է, մտադիր է կ'ըսեն համակերպիլ իրեն տրուած հրամանին, սակայն կառավարութենէն կ'երկնչի։

Ազարեան ընդունած է նաև երիտասարդի մը այցելութիւնն, որ իրեն Հայաստէր ընթացք մի բռնել առաջարկած է, յաւելլով թէ հակառակ պարագային պիտի սպաննուի։

Երեկ կեդ. վարժարանէն երեք ուսանողներ ձերբակալեցին, այսօր չորրորդ մ'ալ տարին։

Ալէքսիանեան Սրբազանի Սոյ կաթողիկոս ընտրուիլն թուր կառավարութեան հաճելի չըլլալուն, Բ. Դուռն յաջողեցաւ Մամիկոնեան Աբրահամ եպիսկոպոսի միջոցաւ այդ ընտրութեան վաւերականութեան դէմ բողոքել։ Աբրահամ եպիսկոպոս իրեն արքանեակ ունեցաւ Սոյ թեմէն մի քանի եկեղեցականներ որք վերջերս բանտէն ազատելով Պոլիս կը մնային յորս և Խնուսի վանահայրն։ Այս խումբն չյաջողելով մի քանի այլ եկեղեցականներ իրենց յարել, բողոքագրի մէջ սոցա ստորագրութիւնն դրած էին։ Խարդախութիւնն երևան ելաւ, սակայն խումբն չի ցրուեցաւ։ Երեկ այդ վատ եկեղեցականներն Նազմ փաշայի իրենց տուած հրահանգի համաձայն մեկնեցան իրենց վիճակներն, անդ ևս յուզումներ յարուցանելու և իրենց ձայնակիցներ գտնելու նպատակաւ։ Ազգին և Պատրիարքարանի կամաց դէմ գործող այս եկեղեցականներն են որոց ազատութեան համար Ազգն ու պատրիարքարան այնքան աշխատեցան։ Պատրիարքն և Բաղաքական ու Կրօնական ժողովներն համաձայն են և անշուշտ պիտի յաջոպին հակառակ կառավարութեան ջանից և մերայնոց վատութեան՝ հայրենասէր Ալէքսիանեանն ընդունել տալ Սոյ աթոռին կաթողիկոս։

Մի քանի օրերէ ի վեր ձերբակալութիւնք տեղի կ'ունենան աստ։ Աւելի քան 200 հոգի բանտարկուած են գրեթէ ամեքն գաւառացի։

Բանտերու մէջ ծեծ ու չարչարանք վերսկսած են, նոյն իսկ ի Պոլիս։

Այս ամենն ժողովուրդն կը յուսահատեցնեն։ ժամանակ է գործելու։

ԾՈՎ.

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

(Մեր ուղեւոր թղթակցէն)

Կ. Պոլիս, Յուլիս, 1895

Հիմա Պոլիսը շատ դէշ վիճակի մէջ է։ Թուրք կառավարութիւնը պէսպէս միջոցներ կը հնարէ Հայերն նեղելու. մերթ ծակը քաշուած օձի նման կը դիտէ հանդարտ, և կը թողու որ երիտասարդք ազատ երգեն և ազատ խօսին, մերթ կը յարձակի նրանց վրայ յանկարծ և կը խայթէ։

Պոլսոյ երիտասարդութեան վրայ ես շատ զմայլեցայ։ Մենք, կ'ասեն այս տեղի հայ երիտասարդք, այս կամ այն թերթը կարդալով դրանց կուսակցութեան պատկանած չեմք լինիր, մենք կը կարդանք Դրօշակ ալ, Հնչակ ալ, Հայք ալ, որքան որ ձեռքերնիս անցնին։ Սրանց հետ խօսեցայ ընկերվարականութեան մասին, չեն ուզեր լսել իսկ այդ բառը։ Նոյնը լսեցի նաև աւելի զարգացած անձերէ։ Բանը սա է թէ ո՞ր խմբագիր որ իր թերթը կարենայ մացուցանել Տաճկաստան կը կարծէ թէ իր թերթը կարդացողներն և նուիրատուութեամբ կամ թղթակցութեամբ երբեմն օգնողներն իրեն կուսակցութեան կը պատկանին, և իրեն մասնաճիւղն են.— և շատ կը սխալին։ Այս տեղի երիտասարդութիւնն կը նուիրէ իր լուման բոլոր անոնց որոնք կ'աշխատին, ինչեան կը լինին թող լինին, սրանց հոգը չէ։ Միայն խաբուիլն իրենց ցաւ կուտայ. մենք, կ'ասեն, չենք սիրեր տեսակ տեսակ բաժանումներ մեր Հայութեան մէջ. մենք կ'ուզենք մի զօրաւոր միութիւն։ Օր մի զիս հրաւիրեցին մի տեղ, ուր տեսայ թէ ժողովուած էին ամենքը, Դրօշակի, Հնչակի, Հայքի համակրողներ անխտիր։ Երբ ես վերջին բարեւս տուի, իրենցմէ մի քանին, վըտանգ յանձն առնելով, եկան զիս ճամբել մինչև նաւը,—ռուսական գլխարկս է որ իմ ընկերութիւնս վտանգաւոր կ'անէ։ Եւ ուրիշներն ալ որ Պոլսոյ մէջ ուշ լհած էին իմ հոս լինիլս, և լալով կ'ասէին թէ իրենք դրամ ու կեանք դնելու պատրաստ են, սակայն չունէին առաջնորդ մը. ինչ որ կ'անենք, կ'ասեն, մենք մեզէն խորհելով կ'անենք, գուցէ անանկ բաներ ալ երբեմն կը գործենք որ վնաս է։ Ես իրենց սիրտ տուի և քաջալերեցի...։

Թող Ամերիկայի հայ երիտասարդութիւնն օրինակ առնէ Պոլսոյ այս լուրջ եղբայրութենէն։

Ճ. ՍԱՆԻՄ

ԿԼԱՍԹՈՆ ՆՈՐԷՆ ԿԸ ԽՕՍԻ ԶՀԱՅԱՍՏԱՆԻ

Օգ. 6ին Մեծ Ծերունին պերճիմաստ և պերճախօս ատենախօսութիւն մ'ալ նուիրեց Հայկական Խնդրոյն, յորում ասաւ թէ ուրախ էր իմանալ որ Ամերիկայում հանրային զգացումն Հայկական Խնդրոյն նկատմամբ աւելի՛ ևս զօրաւոր էր քան յԱնգլիա։ Հայաստանի մէջ գործուած ոճիրներն նա բովանդակեց սա չորս սոսկալի բառերու մէջ— կալև կապուտ, առեւանգումն, տանջանք և սպանութիւն։ Նա յայտարարեց թէ Կ. Պոլսոյ կառավարութիւնն պատասխանատու է այս ամենուն համար, և մեծ տէրութեանց պատիւն կը պահանջէր որ բարեկարգութիւնք ներմուծուին ի Հայաստան, և առ այս պէտք է, նախ, բնաւ յարգ չընծայել Թրքի խոստմանց, և երկրորդ չվախնալ «բռնադատելէ» զԹուրքն։

Բոլոր աշխարհ զմայլեցաւ մեծ Ծերունւոյն վերայ որ այդ զառամեալ հասակի մէջ կը խօսէր երիտասարդական ապշեցուցիչ կորովով, հնչուն ձայնիւ և միանգամայն արդարութեան սիրով բորբոքած վսեմ պերճախօսութեամբ։

Սկսան սակայն լրագիրք ոմանք քննադատել այդ ճառի քաղաքական նպատակայարմար լինիլն կամ ոչն։ Ն. Ե. Հէրալտ թերթն անգամ մ'ալ իւր խմբագրական կարծեաց խակութիւնն ապացուցանելով թէ «Կլատսթոնի Հայկական ատենախօսութիւնն նոր ապացոյց մ'է իւր անճարտարութեան արտաքին գործոց մէջ։» Հէրալտի կարծեօք, այդ հրացայտ խօսքեր «կ'աւելցուցեն Լորտ Սալզպէրիի դժուարութիւններն։»

Հէրալտի այս ծաղրելի կարծիքն աւելի խայտառակեցաւ երբ հեղինակութիւն ունեցող անգլիական թերթեր, պահպանողականք իսկ, ի գլուխ որոց Թայմզ, խորին գոհունակութիւն յայտնեցին Կլատսթոնի ատենախօսութեան նկատմամբ։ Թայմզ ասաւ «Տիար Կլատսթոն բառ մ'իսկ չարտասանեց որ հաշուեալ լինէր Լորտ Սալզպէրիի կառավարութիւնն տագնապելու։ Նորա կրիւք բոցավառ ճար-

տասանութիւնն չանցաւ եղելութեանց սահմանէն անդին։ Եթէ առենախօսութիւնն օգնէ, ինչպէս աներկբայ պիտի օգնէ, յառաջ բերելու բաղձացեալ վերջաւորութիւնն, նա պիտի առած լինի վարձքն այս անզուգական ճիգին համար, անզուգական մինչև իսկ ֆիզիքական տեսակետով, այդ հասակն ունեցող ծերունւոյ մի համար։»

Ն. Ե. Փոսթն աւելի պարզօրէն կը ցուցնէ թէ Կլատսթոն չխօսեցաւ մինչև որ ընտրական պայքարն վերջացաւ յԱնկլիա, որպէս զի կուսակցական ջանքի մի երեւոյթ ն չունենար։ Միթինկի նախագահն էր Ուէսթմինիսթրի դուքսն, Սալզպէրիի մտերիմ բարեկամն, և Կլատսթոն գրեթէ ի խնդրոյ Սալզպէրիի խօսեցաւ։ Այսպէսով աջակից եղած կը լինին Հայկական դժուարին խնդրոյն մէջ երկու մեծ կուսակցապետներն, և Մեծ Ծերունին բովանդակ անգլիական կարծիքն դրած կը լինի Սալզպէրիի կռնակին՝ ասելով՝ «Օ՛ն անդր, ուժովցիր ու բռնադատէ, բոլոր երկիրն քո հետդ է։»

ԴԱՇՈՑՆ ԵՒ ԱԶԳԻ ԴԱՒԱՃԱՆՔ

Ազգի մի ճգնաժամական պահուն բացառիկ այնպիսի միջոցներ կը գործածուին որք սովորական ժամանակի բնաւ չեն պատշաճիր։ Այդ արտասովոր միջոցներէն է ազգային դաւաճանաց հետ դանակով խօսելու ծայրայեղութիւնն։ Պէտք մեր երիտասարդութեան զգօնութեան նշան է այն իրողութիւնն թէ մինչև ցարդ չսպաննեցին այն կարգի մատնիչ մի որոյ մահուան արժանաւորութիւնն երկբայական երեւէր։ Կը կարծեմք թէ չէին սպաններ մինչև անգամ զԹիւթիւնճիէֆ, եթէ սա թրքանալով իւր սրտին յարմար անուն մի, Մուհամմէտ կամ Հասիտ, որդեգրած լինէր։ Ցայնժամ նա կը համարուէր չար թուրք պաշտօնէից մին, որոց թիւ լէգէոն է, և զորս սպաննելով սպառելու ոչ յոյս և ոչ փափաք ունին Հայ Հայրենասէրք։ Նուվէլ տ'Օռիանէն առնլով յիշեցինք նախորդ թուով թէ զԱզարեան և զԱչըգեան ևս սպաննելու միաք յղացեր են եղեր հայ յեղափոխականք. եթէ այդ լուր ճշմարիտ է, կը ցուցնէ թէ մեր երիտասարդք փորձանքի սահմանին չափազանց մօտ գնացեր են։ Աչըգեան իւր արժանաւոր պատիժն գտաւ պաշտօնական լինելով. և չափազանց ծանր պատիժ չի նկատուիր եթէ կարգազուրկ հռչակուի. բայց մեռցունե՞լ, ո՛չ, չէ արժան։ Նոյնպէս չէ արժան մեռցունել զԱզարեան։ Այդ պիտի թուէր ոչնչականութեան միտումն, կեանքի վերայ թեթեւութեամբ խորհելու նշան, և չատ պիտի ընասէր մեր դատին յաչս Եւրոպիոյ։ Վատերն զանազան ատիճաններ ունին, և պատիժք պարտին համեմատական լինիլ, որպէս զի արդար լինին։ Ազարեանի պատիժն առ այժմ պէտք է լինի անմիջական գահավիժումն իւր պատրիարքական աթոռէն։ Ե՛րբ որ կարելի է բարոյական պատիժ տալ, պէտք է հրաժարիլ ֆիզիքականէն։ Ազարեան ընդունակ է բարոյական պատժոյ. Թիւթիւնճիէֆ ընդունակ չէր։

Սերտեցէք Ֆռանսայի յեղափոխութեան պատմութիւնն, և տեսէք թէ դաշունի պատիժն որպիսի արբեցուցիչ, խելահեղիչ ոյժ ունի, և ինչպիսի ողբալի, չարաղէտ չափազանցութեանց կը տանի։

Պէտք է վախնալ չիցէ՞ թէ դաշունի պատիժն ճաշակ ստեղծէ մեր մէջ և ճաշակն յայտնուի խաղախութեան ժամանակ — ինչպէս դժբաղդաբար կը տեսնուի Ֆուլկարիս։

ՆԱՄԱԿ «ԴԺՕԽՔԻ»

«Դրօշակի» թիւ 9ի յաւելուածէն կարտատպեմք Դժոխքի Նամակին հետեւեալ մասերն.—

«Յ0... 95 Մայիս 2

«... Ես մօտէն գիտակից լինելով պ. Մահանուն Պ. Մուրատի գործունէութեան և մասնակից, ըստ կարեաց, նորա ձեռնարկներին,— մեք հարիւրաւոր փորձերով համոզուեցանք որ կուսակցական բաժանմունքը, երբ այդ յառաջ կուգայ իբրեւ հետեւանք գաղափարի արմատական ապրբերութեան, երբ կուսակցութիւնը կը պայմանաւորուի մի ոևէ հասարակական հարցի կամ երեւոյթի մասին, տարբեր աշխարհայեցողութենից, ժողովրդի խա-

դաղ ժամանակին, անբարոյականութիւնները՝ բարոյականութիւնից զատող, ճշմարտութեան արտայայտիչ, և ժողովրդի քայլերը յառաջ տանողն է, իսկ յեղափոխական գործին մէջ, պատերազմի դաշտում, ժողովրդի ներկայ գրութեան և իրերի այս տագնապալից վիճակի մէջ, մանաւանդ երբ չկայ գաղափարի տարբերութիւն, երբ հիմնաքարը՝ երկու կողմից էլ՝ մարդկանց նեղ եսի մէջ է կայանում, այդպիսի կուսակցութիւնները ժողովրդի հիմը քանդող ու տապալողն են... Այդպիսի կուսակցութիւններն են, որ զուգապատիւ են ժողովրդի իրական շահուց դաւաճանութեան։

«... Բաւական է, պարոններ, բաւական է, ժամանակ է զգալ ձեր տմարդի ընթացքը։ Ժամանակ է զգալ, որ Սասունի 10,000 նահատակների ձեռին, 8—10 հրացան միայն տալու կարողութիւն ունեցող մի կազմակերպութեանը՝ ինքզինքը Կրիմ նկարել, իսկ Սասունի բարձունքը քանդող, աւերող ամեհի գազաններին՝ քոթոթ, դա՝ միայն ծաղրածուների գործ է։ Քոթոթ է նկարուած նաև դաշնակցութիւնը՝ որը, եթէ քիչ էլ է գործել, գոնէ համեստութիւն է ունեցել չը գոռալու ընթերցողների ականջը խլացնելու չափ՝ «Մե՛նք զարկինք», «մե՛նք ջարդեցինք», «մե՛նք»... շարունակ «մե՛նք»...

«... Շնորհակալութիւն գաւառներին... Նոքա գիտցան բուն դաշնակցական լինելը, նոքա դիւրաբար ընդունեցին վըշտացած հերոսին իւր ընկերներով, և նա մոռացաւ ձեզնից ստացած վիրաւորանքը. մոռացաւ նա, որովհետև սիրտը լի էր իսկական սիրով, սիրով՝ դէպ ի թշուառ ժողովուրդը, որը իրեն կ'ըսպասէր... Այո՛, անմահ Մուրատի «մեղքը» միայն անոր մէջ կը կայանար, որ նա «անպայմաններից» չէր։ Անպայման հնչակեան է պահանջւում լինել՝ Հնչակը, այսինքն գիտնալ դաշնակցականներին գրականական գողեր, աւազակներ անուանել, գիտնալով հանդերձ որ դա՝ զրպարտութիւն է, ստո՛ր զրպարտութիւն...։

Անպայման դաշնակցական լինիլ է պահանջում նաև Դաշնակցութիւնը, այսինքն հայհոյել Հնչակեաններին աջ ու ձախ, չը խնայելով նոյն իսկ Տամատեաններին, Մուրատներին, գիտնալով հանդերձ, որ նոքա հերոսներ էին։ Բաւական է։

«... Ի՞նչ ունի՛ք, ի՞նչ։ Ո՞րն է այն գաղափարը՝ որը ձեզ ի միմեանց կը ջոկէ, ի՞նչ կէտի վրայ է ձեր հասկացողութիւնների մէջ եղած տարբերութիւնը որ դուք ձեր ողորմելի ոյժերը միացնելու տեղ, կը ջլատէք, և ձեր պաշտպանութեան յանձնուած թշուառ ժողովրդի տունը հիմնայատակ կը տապալէք։

«Ամօթ է, յանցանք է։

ԴԺՈԽՔ»

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգինն է 5 տոլար Հասցէն է "Խմբագրութիւն Մշակի"(MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա։ ԱՐՁԱԳԱՆՔԻ եւ պայմանն ու հասցէն նոյն է։

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ և ԲԱԶՄԱՎԷՊ։ Տարեկան բաժնեգին իւրաքանչիւրին է 2 տոլար։

ԲԱԶՄԱՎԷՊի հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅի հասցէն է,
Redaction du HANTES,
Conven Mechitariste,
VIENNE, AUTRICHE

Լ'ԱՌՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻՈՅ բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ. Հասցէն է—
33 De vere Gardens W, LONDON, ENG.

«ԱՐԱ»ի Տարեկան բաժնեգինն է երկու տոլար.
Հասցէն է. Editor of ARA,
Chogda, Bengal, INDIA.

ՀԱՅՐԵՆԻՔ
ՕՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ։ Օտար երկրաց համար տարեկան բաժանորդագինն է 25 ֆրանք կամ 5 տոլար։ «ՀԱՅՐԵՆԻՔ» Թրքահայոց լաւագոյն լրագիրն է։
Հասցէն է—
Le Journal HAIRENIK,
Galata, Constantinople, Turquie

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Կը խնդրուի ՀԱՅՔի Ռումանիոյ և Պուլկարիոյ պատուարժան բաժանորդներէն կամ բաժանորդ գրուիլ փափաքողներէն, որ հաճին փութացնել իրենց բաժանորդագիներն Տիար Գառնիկ Տէօքմէճեանի, մեր գործակալին ի Ռուսճուք։

ԳԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

ՑԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ամեն տեսակ գրեանց և տպագրական արտադրութեանց, ղանազան պատկերներու են. են.։

ԳՈՐԾԱԿԱԼ

«Արաքս», «Հայք», «Հանդէս Ամսօրեայ», «Բազմավէպ», և այլ առօրին և պարբերական հրատարակութեանց։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հրատարակչական Ընկ. Հայոց Թիֆլիզի և այլ մի քանի ծանօթ գրատանց և տպարանաց։

ՀԱՅԹԱՅԹԻՉ

Եւրոպական լեզուաւ ամեն տեսակ գրեանց և հրատարակութեանց։

Հաստատեալ 1890 ի Ռուսճուք

ՄԱՐՋԱՐԱՆ

ՄԱՐՁԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ա. Գ. ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւէ, քալէ, վազէ, չրջան անէ, սուրն, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած են. են.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սէնթ։

ՆԻՒ ԵՈՐՔ

ՃԷԹ ՃԱՈԻՕ

անունն է Ուստըրի Ֆրօնթ փողոցին մէջ գտնուող թիւ 14 վաճառատանն, ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց, ձեռնոց, չապիկ, օձիկ, փողկապ, ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է աս, ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են։

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ
ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին. կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ։ Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև կէս օրէն վերջ 4։ Շաբաթ օրերն 9էն մինչև 1։

Հասցէն է 314 Մէյն փողոց։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
5 և 7 E. 10դ. Փողոց
5դ. Էվինիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք
26դ. և 27դ. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & Co.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին
և չափաւոր գնով

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address

MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

MORRISON & Co.

ԴԵՐԶԱԿ

106 Fulton St., New York

Ամառուան համար ընտիր ձեռք մի զգեստ, ձեր վերայ յատկապէս ձեւուած չափուած կը շինեմք 16 տոլարի, իսկ առնազգեստ (փանթոլոն) 4 տոլարի։ Ձեւին կատարելութիւնն ու ճշդութիւնն կերաշխաւորենք։

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ
ԱՄԷՐԻԿԷՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s M[illegible]ey Order)

Կատարելապէս ապահո[illegible]ն։ Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիս[illegible] կրնաս առնուլ հետեւեալ պայմաննե[illegible]վ վճարելի յԵրոպա.

Ոչ աւելի քան			5	տոլ.	5 սենթ
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	,,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	,,	100	,,	30



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ
ՓՈԽԱԴՐՈՒԹԵՐՆ
ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս չատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և աչաստ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ատի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետեւեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

ՆԵՐԿԱՅՈՒՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Յ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստ, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Բսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ համգամանք ճառախօսութեան.— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ., և ատենախօսութեան պէսպէս ՇԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ու կէս փրանք կամ 1 րուպլի (50 սէնթ։) Ու, ածալ120 երես։ 1891

ՀԱՅԿԱԿԱՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութ[իւ]նք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեամ[բ] դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ [շ]շանակուած են։

Գինն է 50 սանթ[ի]մ(10 սէնթ) 31 երես։ 1894

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ՁԷՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱ՞Ր Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ Շ[Ն]ՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՁԱ՛ՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳՔ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 փրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ եւս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է։ Հետեւապէս հարցն այն չէ թէ կարօ՞տ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ։ Զերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացունեմք։ Ոչ թէ բան մ'աճելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերն ապամաբանել է յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կ[ա]րենայ իբրեւ մաքրուած և ազգային եկե[ղ]եցւոյ տիպար նկատուիլ ա[մ]գին լուսամիտ մասէն։

Գինն է 1 փրա[ն]ք (20 սէնթ) 61 երես։ 1888

«Հայքի» [ա]նցեալ տարիներն կը վա[ճա]ռուին հետ[եւ]եալ գներով.

Ա. տարի,	1	տ[օ]լար	50 սէնթ	կամ	7.5 փր.
Բ. ,,	2	,,		կամ	10 փրանք։
Գ. ,,	2	,,		,,	,, ,,
Դ. ,,	2	,,		,,	,, ,,

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ